ՀԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

Ձերդ Սրբութիւն
Իլիա Բ Պատրիարք-Կաթողիկոս
Համայն Վրաց Օրթոդոքս Եկեղեցւոյ

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Հոգեկան գերագոյն ուրախութեամբ ողջունում եմ Ձերդ սիրեցեալ եղբայրութեանը, երբ այսպէս իմ կեանքում առաջին անգամ լինելով ես գտնւում եմ Վրաստանի օրհնեալ հողի վրայ եւ առաջին հերթին ողջագուրւում եմ իմ հոգեւոր եղբօր հետ Վրացական հայրենիքում:

Բնականօրէն Մենք յիշում ենք այն պահերը, երբ եղել ենք միասին, աղօթել ենք միասին, խօսել ենք միասին, բայց այդ եղել է օտար երկրներում եւ տարբեր պայմանների ու պարագաների ներքոյ: Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելուց յետոյ սա մեր անդրանիկ հանդիպումն է, մեր առաջին պաշտօնական այցելութիւնը, որ վստահաբար առաւել եւս պիտի սերտացնի մեր թէ՛ անձնական, եւ թէ՛ պաշտօնական յարաբերութիւնները եւ պիտի առաջ տանի մեր երկու եկեղեցիների գործակցութեան դարաւոր ընթացքը:

Ես շատ եմ կարդացել Վրաստանի, Վրաց Օրթոդոքս Եկեղեցու եւ Վրաստանում ապրած եւ ապրող հայ ժողովրդի պատմութեան մասին: Բայց ուրիշ իմաստ եւ առաւել քաղցր համ ունի անձամբ գտնուել Վրաստանում եւ սեփական աչքերով տեսնել այն երկիրը, որ այս Կովկասեան տարածաշրջանում Հայաստանի հետ միասին եղել է քրիստոնէական ուղղափառ հաւատքի թատերավայր, որտեղ կատարուել են Քրիստոսի քարոզած գաղափարներից, բարոյական սկզբունքներից եւ հոգեւոր արժէքներից ներշնչուած սքանչելի

digitised by A.R.A.R.@

գործեր, որտեղ Ս. Աւետարանը ապրուել է կենդանի հաւատքով եւ օրինակելի հաւատարմութեամբ, մինչեւ իսկ նահատակութեան, արեան վկայութեան աստիճանով:

Մենք քաջատեղեակ ենք, թէ ինչքա՜ն խոր եղբայրական սիրով Ձերդ Սրբութիւնը կապուած էր մեր երջանկայիշատակ նախորդին՝ Տ. Տ. Վազգէն Ա անմոռանալի կաթողիկոսին, որի հետ Ձեր փոխադարձ այցելութիւնները միշտ եղան եղբայրութեան պերճախօս վկայութիւններ, որոնց վերջինը եղաւ Ձեր անձամբ ներկայութիւնը նրա վախճանման եւ թաղման արարողութեան ի Ս Էջմիածին, որպէս սիրոյ եւ յարգանքի գեղեցիկ արտայայտութիւն:

Խորապէս շնորհակալ ենք նաեւ որ Մեր կաթողիկոսական ընտրութեան եւ գահակալութեան առիթով Ձեր ներկայութիւնը զգացինք Մեր կողքին Ձեր ուղարկած պատգամաւոր Դանիէլ Սրբազանին եւ Ձեր շնորհաւորական բարի մաղթանքների եւ արտազգած աղօթքների միջից:

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Մեր երկու ժողովուրդները եւ երկու եկեղեցիները իրենց 1700-ամեայ կեանքը այս տարածաշրջանում ապրել են միշտ լինելով իրարու հաղորդակից, իրարից անբաժան, հասարակաց նոյն պայմանների եւ կացութիւնների դիմաց՝ ճակատագրակից:

Ներկայումս, այս ողջ տարածաշրջանում տեղի ունեցած արմատական փոփոխութիւնների հետեւանքով նոր կացութիւնների առաջ ենք գտնւում: Ազատ, անկախ, ինքնիշխան պետութիւն են դարձել Վրաստանը ու Հայաստանը: Այսօր որպէս հարեւան երկրներ, բարեկամական, եղբայրական փոխյարաբերութիւնների անհրաժեշտութիւնը ամենօրեայ հացի պէս կենսական է մեզ համար: Պատմութեան մէջ եղել են պահեր, երբ ունեցել ենք որոշ տարակարծութիւններ, դիմագրաւել ենք ներքին դժուարութիւններ, բայց տիրապետող գիծը եղել է միշտ սերտ լծակցութիւնը մեր երկու երկրների եւ եկեղեցիների միջեւ: Եւ պատմութիւնը վկայ՝ միշտ եւ երկուստեք, մենք ենք, երբ եղել ենք միասնական: Մեր ժողովրդի համար Վրաստանը երբեք չի եղել

digitised by A.R.A.R.@

օտար երկիր: Մեր ժողովուրդը ապրել է եւ ապրում է այս երկրում որպէս իր սեփական տանը, իր եկեղեցիներով, իր դպրոցներով, իր մշակոյթով, իր ընկերային սովորութիւններով ու բարքերով: Իր քրտինքն է խառնել այս հարազատ հողին, իր պատմութիւնն է միաշաղախել Վրաստանի պատմութեան հետ:

Հայց. Առաքելական Եկեղեցին եւ Վրաստանի Օրթոդոքս Եկեղեցին՝ քրիստոնէական սիրոյ, միութեան եւ եղբայրութեան սկզբունքներից առաջնորդուած՝ ոսկի կամուրջ են մեր երկու երկրների եւ ժողովուրդների կեանքերը իրար միացնող:

Ահա այս զգացումներով եւ էկիւմենական ոգով յատկանշուած եւ զարգացող այս դարի համաշխարհային եկեղեցական կեանքում, մենք կոչուած ենք աւելի գործնական եւ տեսանելի արտայայտութիւն տալ մեր եղբայրութեան եւ համերաշխութեան, որպէսզի կարենանք կենդանարար ազդեցութիւն ունենալ մեր ժողովուրդների հոգեւոր-բարոյական եւ ազգային կեանքի առողջ եւ կենսունակ ու ստեղծարար յառաջխաղացքին մէջ: Յովհաննէս Աւետարանչի ԺԷ գլուխի ներշնչող ոգին, միութեան հրամայականը թող արձագանք գտնի մեր այսօրուայ հասարակաց կեանքում. «Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն քո, որով ետուրն ինձ, զի եղիցին մի, որպէս եւ մէք մի եմք» (Յովհ. ԺԷ 11):

Թող Բարձրեալն Աստուած խաղաղ եւ անսասան պահէ Հայաստանը ու Վրաստանը բարեկամական լծակցութեամբ, փոխադարձ սիրով եւ ընդհանրական շահերի բարձր գիտակցութեամբ ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ հայոց եւ վրաց պատուական ժողովուրդների:

Մնամք եղբայրական սիրոյ քաղցր ողջունիւ՝

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8 - 11 Սեպտեմբեր 1995

digitised by A.R.A.R.@